

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/49Ա

25/01/2013

ՌԵՊՈՒ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԵՊՈՒ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՌԵՊՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ԿՆՔՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով “Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ համաձայն հավելվածի 1-ի (կցվում է) և Արտակարգ իրավիճակներում ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը համաձայն հավելվածի 2-ի (կցվում է):
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավաբանական վարչությանը՝ սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից երկու շաբաթվա ընթացքում Համաձայնագիրը և Արտակարգ իրավիճակներում ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի ստորագրմանը.
3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կործրած են ճանաչվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի՝ 2007 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1/1118 Ա և 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1/1573 Ա որոշումները, սակայն այդ որոշումների հիման վրա Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի միջև կնքված համաձայնագրերը մնում են ուժի մեջ մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերին համաձայնագրերը միակողմանիորեն լուծելու վերաբերյալ ծանուցելը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկերի համար, որոնք ստորագրել են Համաձայնագիրը՝ մինչև Համաձայնագրում նշված պահը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ

**Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կնքման
գլխավոր համաձայնագիր**

ք.Երևան

..... 2012թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ՝ Արթուր Զավադյանի, մի կողմից, և բանկը (այսուհետև՝ Բանկ), ի դեմս....., մյուս կողմից (այսուհետ՝ երկուսը միասին Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) հետևյալի մասին.

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը համաձայնվում են, որ իրենց միջև Ռեպո, Միջօրյա ռեպո, Լոմբարդային ռեպո և Հակադարձ ռեպո գործարքները կնքվելու, կատարվելու և մարվելու են Կանոններով սահմանված կարգով և պայմաններով:
2. Ռեպո, Միջօրյա ռեպո, Լոմբարդային ռեպո և Հակադարձ ռեպո գործարքներ կնքելու, կատարելու և մարելու հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները, որոնք կարգավորված չեն Կանոններով, կարգավորվում են ՀՀ իրավական ակտերով:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

1. Սույն Համաձայնագրում օգտագործվող, մեծատառով սկսվող ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.
 - 1.1. **Կանոններ**՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 22 Հունվարի 2013թ. թիվ 20 Ա որոշմամբ հաստատված “Ռեպո/հակադարձ ռեպո” համակարգի կանոններ.
 - 1.2. **Գործարքի կողմ**՝ սույն համաձայնագրի կողմերը.
 - 1.3. **Գործարք**՝ Սույն համաձայնագրի հիման վրա Կողմերի միջև կնքված Ռեպո, Միջօրյա ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքները միասին.
 - 1.4. **Թերացման դեպք**՝ այն դեպքն է, երբ՝
 - 1.4.1. Բանկը ճանաչվում է անվճարունակ կամ նրա բանկային գործունեության լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած կամ անվավեր:
 - 1.4.2. Չմարված պարտավորության առաջացման պահից երկու բանկային օրվա ընթացքում Բանկը չի կատարում այդ պարտավորությունը կամ չի ապահովում այդ պարտավորության կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Չմարված պարտավորությունը համարվում է առաջացած, այն պահից, երբ

տեղի են ունեցել այդ պարտավորության առաջացման համար՝ Կանոններով և(կամ) Համաձայնագրով նախատեսված հանգամանքները.

1.4.3. Կողմերից որևէ մեկը ծանուցում է մյուս Կողմից սույն համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին: Սույն կետում նշված դեպքում Թերացման դեպքը համարվում է տեղի ունեցած սույն կետում նշված ծանուցումը ուղարկելուն հաջորդող երեսուներորդ օրը :

1.5. **Չմարված պարտավորություն՝** Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքից ծագած Բանկի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ հետևյալ պարտավորությունները՝

1.5.1. Բանկի՝Ռեպո զամբյուղի համալրման հետ կապված՝Կանոններով սահմանված կարգով չկատարված ցանկացած պարտավորություն.

1.5.2. Սույն համաձայնագրով և(կամ) Կանոններով և(կամ) ՀՀ իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում, կարգով և չափով Բանկի՝ Կենտրոնական բանկին տուժանք վճարելու պարտավորություն (բացառությամբ Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված տուժանքների).

1.5.3. Կենտրոնական բանկի նկատմամբ Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված ցանկացած այլ հիմքից ծագած՝ Բնակի ցանկացած այլ պարտավորություն, որի կատարման ժամկետը լրացել է: Սույն կետը չի տարածվում Հակադարձ ռեպո գործարքների վրա.

1.6. **Բանկի պարտավորություններ՝** Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքերից ծագած Կենտրոնական բանկի նկատմամբ Բանկի պարտավորությունների՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը.

1.7. **Բանկի իրավունքներ՝** Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքից ծագած Կենտրոնական բանկի նկատմամբ Բանկի իրավունքների՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը.

1.8. **Կենտրոնական բանկի պարտավորություններ՝** Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքից ծագած Բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի պարտավորությունների՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը.

1.9. **Կենտրոնական բանկի իրավունքներ՝** Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքից ծագած Բանկի նկատմամբ Կենտրոնական բանկի իրավունքների՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը.

1.10. Կողմերի Իրավունքներ և Պարտավորություններ՝ Բանկի իրավունքներն ու պարտավորությունները և Կենտրոնական բանկի իրավունքներն ու պարտավորությունները միասին.

1.11. Զամբյուղի արժողություն՝ Թերացման դեպք առաջանալու պահին Ռեպո զամբյուղում հաշվառվող բոլոր Արժեթղթերը և դրամական միջոցները.

1.12. Վերջնահաշվարկ՝ Թերացման դեպք առաջանալու պարագայում Գործարքների լուծումից հետո Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործընթաց, որն ուղղված է Կողմերի Իրավունքների և Պարտավորությունների ծավալի որոշմանը, հաշվանցի միջոցով այդ իրավունքների և պարտավորությունների ծավալի փոփոխմանը և Զուտ պահանջի որոշմանը.

1.13. Զուտ պահանջ՝ Վերջնահաշվարկի արդյունքում Համաձայնագրի մեկ Կողմի՝ ՀՀ դրամով արտահայտված պահանջը մյուս Կողմի նկատմամբ.

1.14 Նախկին գործարքներ՝ Նախկին համաձայնագրերի հիման վրա մինչև սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելը կնքված ռեպո գործարքները.

1.15. Նախկին համաձայնագրեր՝ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի միջև 29.01.2010թ. կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման թիվ 19/290110-23 գլխավոր համաձայնագիրը և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 22.08.2007թ. «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի օգտագործմամբ) հաստատելու վերաբերյալ» թիվ 1/1118Ա որոշմամբ հաստատված և ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի միջև կնքված գլխավոր համաձայնագիր:

2. Սույն համաձայնագրում օգտագործվող, մեծատառով սկսվող և չսահմանված հասկացություններն ունեն Կանոններով սահմանված նշանակությունը:

Հոդված 3. Գործարքների կնքման, կատարման և մարման ընդհանուր սկզբունքները

1. Գործարքների կնքման, կատարման և մարման նպատակով Կողմերը համաձայնվում են համագործակցել ստորև նշված ընդհանուր սկզբունքների ներքո՝

1.1. Սույն համաձայնագրի ստորագրման ուժով, Գործարքների, ինչպես նաև՝ Հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման և մարման՝ Կանոններով սահմանված պայմանների և ընթացակարգի պահպանելը, ինչպես նաև՝ Կանոններով սահմանված այլ պայմանների և ընթացակարգերի պահպանելը համարվում է Կողմերի պարտականությունը.

1.2. Սույն համաձայնագրի գործողության ընթացքում կնքված և(կամ) կատարված բոլոր Գործարքներով Կենտրոնական բանկին վաճառված Ընդունելի արժեթղթերը Ռեպո զամբյուղում հաշվառվելու պահից դիտվում են որպես իրավական մեկ ամբողջություն կազմող և ապանույնականացված Ընդունելի արժեթղթեր, այսինքն՝ յուրաքանչյուր առանձին Գործարքով վաճառված Ռեպո արժեթղթերը Ռեպո զամբյուղում հաշվառվելու պահից իրավաբանորեն կապված չեն տվյալ Գործարքի հետ և կարող են

Կենտրոնական բանկի կողմից օգտագործվել Բանկի՝ ցանկացած այլ Գործարքից և(կամ) Համաձայնագրով և(կամ) Կանոններով սահմանված ցանկացած այլ հիմքից ծագած պարտավորության կատարման համար, իսկ Բանկն իրավունք ունի յուրաքանչյուր առանձին Գործարքով վաճառված Ռեպո արժեթղթերի դիմաց Կենտրոնական բանկից Կանոններով սահմանված կարգով և պայմաններով պահանջել դրանց համարժեք Ռեպո զամբյուղում հաշվառվող ցանկացած այլ Ընդունելի արժեթուղթ:

1.3.Սույն համաձայնագրի գործողության ընթացքում Կողմերի՝ միմյանց նկատմամբ յուրաքանչյուր պահի դրությամբ ունեցած, Կանոններից, Համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման կամ մարման հետ կապված ցանկացած այլ հիմքից ծագած փոխադարձ իրավունքների և պարտավորությունների ծավալը որոշելու համար հիմք է ընդունվում ոչ թե առանձին Գործարքը, այլ՝ սովյալ պահի դրությամբ Ռեպո զամբյուղի արժողությունը և գործող բոլոր Գործարքներով Կենտրոնական բանկի կողմից Բանկին վճարված դրամական միջոցները չափը.

1.4.Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողության առկայության դեպքում, Բանկն իրավունք ունի Կանոններով սահմանված կարգով, դեպքերում և պայմաններով Կենտրոնական բանկից պահանջել Բանկին սեփականության իրավունքով փոխանցել Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությանը համարժեք Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթեր կամ դրամական միջոցներ: Եթե առկա է Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողություն և Բանկը չի օգտվում իր՝ սույն կետում նշված իրավունքից, ապա Կանոններով սահմանված պահին, կարգով և պայմանների պահպանմամբ Կենտրոնական բանկն իր նախաձեռնությամբ սեփականության իրավունքով Բանկին է փոխանցում Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությանը համարժեք Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթեր.

1.5. Կանոններով սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով թույլատրվում է փոխարինել Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթերը այլ Ընդունելի արժեթղթերով.

1.6.Բանկն իրավունք ունի Կանոններով սահմանված կարգով Բանկային օրվա ընթացքում գործառնությունների կատարման համար սահմանված ժամանակահատվածում Կենտրոնական բանկին ներկայացնել Միջօրյա գործարքի հայտ, որոնց քանակը չի սահմանափակվում.

1.7.Բանկը պարտավոր է յուրաքանչյուր օրվա ցանկացած պահին ապահովել Ռեպո զամբյուղի նվազագույն արժողությունը: Ռեպո զամբյուղի բացասական արժողություն առաջանալու դեպքում Բանկը պարտավոր է Կանոններով սահմանված կարգով Ռեպո զամբյուղը համալրել կամ ապահովել Ռեպո զամբյուղի համալրումն առնվազն այնքան Ընդունելի արժեթղթերով և (կամ) դրամական միջոցներով, որքան անհրաժեշտ է առնվազն Ռեպո զամբյուղի նվազագույն արժողությունը վերականգնելու համար.

1.8.Բանկը չունի Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքով ստանձնած պարտավորությունների մասնակի կատարման իրավունք: Գործարքի մասնակի կատարումը համարվում է պարտավորության խախտում, որի համար Բանկը ենթարկվում է Համաձայնագրով նախատեսված պատասխանատվության:

1.9. Կենտրոնական բանկն իրավունք ունի Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթերի արժողության հաշվին Կանոններով սահմանված կարգով և պայմաններով բավարարել իր՝ Բանկի նկատմամբ ունեցած պահանջի իրավունքները:

1.10. Բանկն իրավունք է վերապահում Կենտրոնական բանկին Կանոններով կամ սույն համաձայնագրով սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով Բանկի թղթակցային դրամային և արտարժույթային հաշիվներից կամ Դեպո հաշվից անակցեպտ կարգով գանձել համապատասխանաբար այնքան դրամական միջոցներ և(կամ) Արժեթղթեր, որքան անհրաժեշտ է Բանկի պարտավորությունների կատարման համար:

1.11. Բանկը պարտավորվում է պահպանել տեղեկատվական անվտանգության ստորև նշված պահանջները՝

1.11.1. Ապահովել իրեն տրամադրված տեղեկատվության և տեղեկատվության պահպանման և մշակման միջոցների ֆիզիկական և տրամաբանական անվտանգությունը:

1.11.2. Անմիջապես տեղեկացնել Կենտրոնական բանկին տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին, այն է՝

1.11.2.1. Բանկին տրամադրված տեղեկատվական ակտիվների վնասում, կորուստ, փոփոխում, ոչնչացում, հափշտակում.

1.11.2.2. Բանկին տրամադրված գաղտնաբարերի, էլեկտրոնային բանալիների կորուստ կամ վարկաբեկում.

1.11.2.3. Բանկին տրամադրված կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսք.

1.11.2.4. Բանկին տրամադրված իրավասությունների տիրապետում այլ անձանց կողմից:

1.11.3. Սույն համաձայնագիրը դադարելուց հետո Կենտրոնական բանկին հանձնել Բանկի տնօրինության տակ գտնվող Կենտրոնական բանկին պատկանող տեղեկատվությունը և տեղեկատվական ակտիվները:

1.11.4. Չօգտագործել Կենտրոնական բանկի տեղեկատվական ակտիվների անվտանգության մեջ Բանկին հայտնի դարձած խոցելիությունները, հակառակը՝ այդ խոցելիությունների մասին տեղեկացնել Կենտրոնական բանկին:

1.11.5. Կենտրոնական բանկի հետ տեղեկատվությամբ և փաստաթղթերով փոխանակվել միայն նախապես համաձայնեցված եղանակով:

1.12. Սույն համաձայնագրով նախատեսված Ռեպո գործարքների և Հակադարձ ռեպո գործարքների կնքումը, կատարումն ու մարումն ապահովվում է Կենտրոնական բանկում Բանկի համար բացված ստորև նշված դրամական հաշիվներով՝

- Պարտավորություն հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով՝.....

- Պարտավորություն ռեպո համաձայնագրերի գծով՝.....

Հոդված 4. Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված Կողմերի միջև հարաբերությունների առանձնահատկությունը

1. Հակադարձ ռեպո գործարքներով վճարված արժեթղթերը կապվում են տվյալ Հակադարձ ռեպո գործարքի հետ :

2. Հակադարձ ռեպո գործարքները չեն ներառվում Ռեպո զամբյուղում :

3. Թերացման դեպք առաջանալու պարագայում, գործող Հակադարձ ռեպո գործարքները Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1.1. կետով սահմանված կարգով չեն լուծվում, դրանց գործողությունը շարունակվում է և դրանք չեն մասնակցում Համաձայնագրի 3-րդ գլխով նախատեսված Վերջնահաշվարկին:

4. Համաձայնագրի 2-րդ գլխով սահմանված հաշվանցի միջոցով չեն կարող հաշվանցվել և մարվել Գործարքներից և Հակադարձ ռեպո գործարքներից ծագած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

5. Կնքված, սակայն դեռ չկատարված Հակադարձ ռեպո գործարքով ստանձնված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակի խախտման դեպքում, խախտման առաջացման օրը տվյալ Հակադարձ ռեպո գործարքն ամբողջությամբ կամ համապատասխան մասով համարվում է լուծված և խախտում թույլ տված Կողմը վճարում է տուգանք Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանված չափով:

Մարվող Հակադարձ ռեպո գործարքով ստանձնված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակի խախտման դեպքում, խախտման առաջացման օրը տվյալ Հակադարձ ռեպո գործարքն ամբողջությամբ համարվում է լուծված և խախտում թույլ տված Կողմը վճարում է տուգանք Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանված չափով:

6. Հակադարձ ռեպո գործարքի լուծման՝ սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության մեջ նշված դեպքում, տվյալ Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող դրամական միջոցները և արժեթղթերը չեն վերադարձվում և մնում են որպես այն Կողմի սեփականություն, ում մոտ դրանք գտնվում են տվյալ Հակադարձ ռեպո գործարքի լուծման պահին:

7. Առանձին Հակադարձ ռեպո գործարքի որևէ հիմքով լուծման դեպքում, մնացած Հակադարձ ռեպո գործարքները չեն լուծվում և շարունակում են գործել դրանց մեջ նշված պայմաններով:

8. Կողմերի՝ տարբեր Հակադարձ ռեպո գործարքներից ծագած հանդիպակաց իրավունքներն ու պարտավորությունները չեն կարող մարվել հաշվանցով, եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում :

Գլուխ 2. Հաշվանցի հետ կապված Կողմերի հարաբերությունները

Հոդված 5. Կողմերի համաձայնությունը հաշվանց իրականացնելու վերաբերյալ

1. Կողմերը հայտնում են իրենց համաձայնությունն առ այն, որ՝

1.1. Կողմերի՝ Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված այլ հիմքից ծագած Կանոններում նշված իրավունքները և(կամ) պարտավորությունները կարող են մարվել հաշվանցի կատարման միջոցով՝ Կանոններով սահմանված կարգով, դեպքերում և պայմաններով:

1.2. Կանոններով նախատեսված բոլոր այն դեպքերում, երբ Կողմի պարտավորությունը ամբողջությամբ կամ մասնակի մարվում է (համարվում է կատարված) այդ Կողմի իրավունքի համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակի դադարման պայմանով, համարվում է, որ իրավական տեսանկյունից կատարվում է սույն հոդվածով նախատեսված հաշվանց:

2. Հաշվանցի իրականացման համար որևէ այլ համաձայնություն չի պահանջվում և Կենտրոնական բանկը Համակարգի միջոցով հաշվանցը կարող է կատարել միակողմանիորեն, սույն հոդվածի հիման վրա՝ Կանոններով սահմանված կարգով:

Հոդված 6. Հաշվանցի դեպքերը

1. Հաշվանցով կարող են մարվել, մասնավորապես, հետևյալ հիմքերից ծագած իրավունքները և(կամ) պարտավորությունները՝

1.1. Գործարքներից ծագած իրավունքներն ու պարտավորությունները.

1.2. Գործարքներից ծագած և Ռեպո զամբյուղի համալրման հետ կապված իրավունքներն ու պարտավորությունները.

1.3. Գործարքներից ծագած և Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողության վերադարձման հետ կապված իրավունքներն ու պարտավորությունները.

1.4. Սույն համաձայնագրի և(կամ) Կանոնների պահանջների խախտման հետ կապված իրավունքներն ու պարտավորությունները և սույն կետի վերը նշված ցանկացած այլ հիմքով ծագած իրավունքներն ու պարտավորությունները.

1.5. Սույն կետի վերը նշված ցանկացած հիմքով ծագած իրավունքներն ու պարտավորությունները.

1.6. Հաշվանցն իրականացվում է նաև Թերացման դեպք առաջանալու պարագայում՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Հաշվանցի իրականացման մասնավոր դեպքերը, ինչպես նաև՝ հաշվանցի իրականացման կանոնները և ընթացակարգը սահմանվում են Կանոններով:

Գլուխ 3. Թերացման դեպք առաջանալու պարագայում Կողմերի միջև հարաբերությունները

Հոդված 7. Թերացման դեպք առաջանալու ընդհանուր հետևանքները

1. Թերացման դեպք առաջանալու պարագայում, այն առաջանալու պահից՝

1.1. Կենտրոնական բանկը Համաձայնագրով և Կանոններով սահմանված կարգով միակողմանիորեն լուծում է Թերացման դեպք առաջանալու պահին Բանկի և Կենտրոնական բանկի միջև գործող բոլոր կնքված և(կամ) կատարված Գործարքները (բացառությամբ Համաձայնագրի 16-րդ հոդվածում նշված Նախկին գործարքների, որոնք պահպանում են իրենց ուժը և կարգավորվում են Նախկին համաձայնագրերով), այդ Գործարքներից ծագած իրավունքներն ու պարտականությունները դադարում են, սակայն Վերջնահաշվարկի կատարման և Զուտ պահանջի որոշման նպատակով, այդ իրավունքների և պարտականությունների ծավալի՝ Գործարքների լուծման օրվա դրությամբ որոշված ՀՀ դրամով արտահայտված արժողությունը հաշվի է առնվում:

Զամբյուղի արժողությունը սեփականության իրավունքով պահպանվում է Կենտրոնական բանկի համապատասխան հաշվում և Բանկին չի վերադարձվում, իսկ մինչև Թերացման դեպք առաջանալու պահը Գործարքներով Բանկին վճարված դրամական միջոցները սեփականության իրավունքով պահպանվում են Բանկի համապատասխան հաշիվներում և Կենտրոնական բանկին չեն վերադարձվում:

Սույն կետում նշված հիմքով դադարած իրավունքների և պարտականությունների փոխարեն համապատասխան Կողմը Վերջնահաշվարկի արդյունքներով կարող է ձեռք բերել միայն Զուտ պահանջի իրավունք:

1.2. Կողմերի՝ սույն հոդվածի 1.1. կետով սահմանված հիմքով չդադարած Իրավունքների ու Պարտականությունների կատարումը կասեցվում է մինչև սույն համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված Վերջնահաշվարկի իրականացման ավարտը: Վերջնահաշվարկի ավարտից հետո սույն կետում նշված իրավունքներն ու պարտականությունները դադարում են, իսկ դրանց փոխարեն համապատասխան Կողմը կարող է ձեռք բերել Զուտ պահանջի իրավունք:

1.3. Մինչև սույն գլխով նախատեսված Վերջնահաշվարկի և Զուտ պահանջ ունեցող Կողմի իրավունքների իրականացման ավարտը, Կողմերի միջև Համաձայնագրի հիման վրա որևէ այլ Գործարք չի կարող կնքվել:

1.4. Կենտրոնական բանկը Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացնում է Վերջնահաշվարկ, որի արդյունքներով որոշվում է Զուտ պահանջի չափը և այն ունեցող Կողմը:

2. Սույն գլխով սահմանված կարգով Գործարքների լուծման, հաշվարկների և Վերջնահաշվարկի ավարտման և Զուտ պահանջ ունեցող Կողմի իրավունքների իրականացման պահից դադարում են Կողմերի՝ Զուտ պահանջի հետ կապված իրավունքները:

Հողված 8. Վերջնահաշվարկի իրականացման կարգը

1. Թերացման դեպք առաջանալուց հետո Կենտրոնական բանկը հաշվարկում է Կողմերի Իրավունքները և Պարտականությունները: Ընդ որում, Կողմերի Իրավունքների և Պարտականությունների հաշվարկի ժամանակ՝

1.1. Հաշվի է առնվում Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1.1. կետի հիմքով դադարած իրավունքների և պարտականությունների՝ դադարման պահին եղած ծավալի՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը:

1.2. Հաշվի չեն առնվում Հին գործարքներից ծագած Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հաշվարկը ավարտելուց հետո Կենտրոնական բանկն Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված հիմքով իրականացնում է Բանկի պարտավորությունների և Կենտրոնական բանկի պարտավորությունների, ինչպես նաև՝ Բանկի իրավունքների և Կենտրոնական բանկի իրավունքների հաշվանց:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով իրականացված հաշվանցի արդյունքում հաշվանցում մասնակցող Կողմերի Իրավունքներն ու Պարտականությունները համապատասխան ծավալով նվազեցվում են, որոշվում է Ջուտ պահանջ ունեցող Կողմը, Վերջնահաշվարկը համարվում է ավարտված, իսկ համապատասխան Կողմը կարող է ձեռք բերել միայն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

Հողված 9. Ջուտ պահանջ ունեցող կողմի իրավունքների իրականացումը

1. Եթե Ջուտ պահանջ ունեցող Կողմը՝ Կենտրոնական բանկն է, ապա՝ Կենտրոնական բանկն իրավունք ունի Ջուտ պահանջի՝ ՀՀ դրամով արտահայտված արժողությունը անակցեպտ կարգով գանձել Բանկի թղթակցային (դրամային, արտարժույթային) հավից: Թղթակցային հաշվում անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով սույն կետում նշված գանձումն իրականացնելու անհնարինության դեպքում, գանձումը կարող է իրականացվել թղթակցային հաշվին դրամական միջոցների մուտք լինելու ցանկացած պահին կամ դատական կարգով:

2. Եթե Ջուտ պահանջ ունեցող Կողմը Բանկն է, ապա Կենտրոնական բանկը Բանկի ընտրությամբ կամ վճարում է Բանկին Ջուտ պահանջի արժողությունը ՀՀ դրամով, կամ՝ Բանկի դեպո հաշվին փոխանցում է Ջուտ պահանջի արժողությանը համարժեք Ռեպո զամբյուղում մինչև Թերացման դեպք տեղի ունենալը հաշվառվող Ընդունելի արժեթղթերի համապատասխան տեսակը:

Սույն կետի 1-ին պարբերությունում նշված Բանկի իրավունքի իրականացման նպատակով, Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին վերջինիս մոտ Կենտրոնական բանկի նկատմամբ Ջուտ պահանջի իրավունքի առկայության մասին՝ նշելով Ջուտ պահանջի՝ ՀՀ դրամով արտահայտված ծավալը: Եթե սույն պարբերությունում նշված ծանուցումը ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Կենտրոնական բանկին չի ծանուցում Ջուտ պահանջի արժողությանը համարժեք

Ընդունելի արժեթղթեր Բանկի դեպո հաշվին փոխանցելու մասին, Կենտրոնական բանկը վճարում է Բանկին Ջուտ պահանջի արժողությունը ՀՀ դրամով, որից հետո Ջուտ պահանջի հետ կապված Կողմերի իրավունքներն ու պարտականությունները դադարում են:

Գլուխ 4. Այլ դրույթներ

Հոդված 10. Պարտավորության խախտման հասկացությունը

1. Սույն համաձայնագրի իմաստով պարտավորության խախտում է համարվում Կողմի՝ Կանոններից և(կամ) Գործարքներից և(կամ) սույն համաձայնագրից և(կամ) Գործարքների կնքման, կատարման և(կամ) մարման հետ կապված ցանկացած այլ հիմքից ծագած դրամական միջոցներ վճարելու կամ Ընդունելի արժեթղթեր փոխանցելու որևէ պարտավորության չկատարումը կամ սույն համաձայնագրով և(կամ) Կանոններով սահմանված կարգի խախտումով կամ ժամկետների ուշացումով կատարումը:

Հոդված 11. Կողմերի պատասխանատվությունը

1. Պարտավորության խախտում թույլ տված Կողմը պարտավոր է վճարել տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար խախտված պարտավորության՝ խախտում թույլ տալու օրվա դրությամբ որոշված, ՀՀ դրամով արտահայտված արժողության 0.5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով, բացառությամբ Հավելված 1-ում նշված խախտման դեպքերի, որոնց համար վճարվում է տույժ՝ Հավելված 1-ով սահմանված չափով: Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հակադարձ ռեպո գործարքների վրա :

2. Սույն համաձայնագրի համաձայն Բանկի կողմից Կենտրոնական բանկին վճարման ենթակա տույժերի և տուգանքների (այդ թվում՝ Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված տուգանքների) գումարը Կենտրոնական բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով գանձել Բանկի թղթակցային (դրամային և արտարժույթային) հաշվից :

Հոդված 12. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

1. Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի ազդեցության:

2. Սույն կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրաբենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն պայմանագրի դրույթները խախտող Կողմը կարող էր կանխատեսել կամ վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

Հողված 13. Վեճերի լուծման կարգը

1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսնօրյա ժամկետում:
2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծելու դեպքում դրանք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Վեճը համարվում է բանակցությունների միջոցով չլուծված, եթե վեճի լուծման վերաբերյալ Կողմի ներկայացված առաջարկը չի ընդունվում մյուս Կողմի կողմից կամ ներկայացված առաջարկի վերաբերյալ Կողմն երեսնօրյա ժամկետում պատասխան չի ներկայացնում կամ ներկայացված պատասխանը չի բավարարում սկզբնական առաջարկը ներկայացրած Կողմին:

Հողված 14. Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է անժամկետ:
2. Սույն համաձայնագրի դրույթները չեն տարածվում Հին գործարքների վրա, բացառությամբ Համաձայնագրի 16-րդ հոդվածի դրույթների:
3. Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Հակադարձ ռեպո գործարքների վրա միայն այն դեպքում, երբ Համաձայնագրի համապատասխան դրույթում ուղղակիորեն այդ մասին նշված է:
4. Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքները կնքելու իրավունքից, կիրառվում են Համաձայնագրի 3-րդ գլխի դրույթները, որից հետո Համաձայնագրի գործողությունը դադարում է:
5. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերի՝ Համաձայնագրով ստանձնած կամ Համաձայնագրից ծագած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
6. Կողմերն իրավունք ունեն միակողմանի լուծել սույն համաձայնագիրը՝ այդ մասին նախօրոք՝ մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս Կողմին:

Հողված 15. Համաձայնագրի փոփոխությունները

1. Սույն համաձայնագիրը կարող է լրացվել կամ փոփոխվել Կողմերի միջև գրավոր ձևով լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:
2. Կողմերը պարտավորվում են Գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով ծանուցել միմյանց իրենց հասցեի, վճարային ռեկվիզիտների, իրավասու էլեկտրոնային հասցեների փոփոխությունների կամ այլ փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սույն համաձայնագրին համապատասխան ստանձնված պարտավորությունների կատարման վրա:

3. Իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում սույն համաձայնագրում, ինչպես նաև դրանց հետագա փոփոխությունները և լրացումները պարտադիր են Կողմերի համար՝ իրավական ակտի ընդունման մասին Բանկին ցանկացած եղանակով ծանուցելուն հաջորդող օրվանից՝ առանց սույն համաձայնագրի սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված կարգով համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու:

Հոդված 16. Անցումային դրույթներ

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Նախկին համաձայնագրերով սահմանված կարգով, այդ համաձայնագրերում նշված ռեպո և հակադարձ ռեպո նոր գործարքներ չեն կարող կնքվել:

2. Նախկին համաձայնագրերի հիման վրա մինչև սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելը կնքված Նախկին գործարքները և Հակադարձ ռեպո գործարքները մնում են ուժի մեջ և դրանց հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները՝ մինչև Նախկին գործարքների և Հակադարձ ռեպո գործարքների մարման օրը, կարգավորվում են Նախկին համաձայնագրերով:

3. Բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերի, յուրաքանչյուր Հին գործարքի մարման օրը, տվյալ Հին գործարքը Կանոններով սահմանված կարգով վերակնքվում է կատարված Միջօրյա ռեպո գործարքի և համապատասխան արժեթղթերը ներառվում են Ռեպո զամբյուղում, տվյալ Հին գործարքը համարվում է դադարած, իսկ դրա հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են միայն Կանոններով և սույն համաձայնագրով: Սույն հոդվածի 2-րդ կետում նշված Հակադարձ ռեպո գործարքները չեն ներառվում Ռեպո զամբյուղում և մարվում են Նախկին համաձայնագրով սահմանված կարգով:

4. Եթե Հին գործարքների մարման օրը Համակարգը վթարների կամ այլ պատճառներով չի կարող պատշաճ շահագործվել, ապա սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթները չեն կիրառվում և Հին գործարքները մարվում են Նախկին համաձայնագրերով սահմանված կարգով:

5. Հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի միջև 29.01.2010թ. կնքված Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կնքման թիվ 19/290110-23 գլխավոր համաձայնագրի 8.4. կետի դրույթները և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 22.08.2007թ. «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի օգտագործմամբ) հաստատելու վերաբերյալ» թիվ 1/1118Ա որոշմամբ հաստատված և ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի միջև կնքված գլխավոր համաձայնագրի 6.4. կետի դրույթները սույն համաձայնագիրը ստորագրելով Բանկը ծանուցում է Կենտրոնական բանկին այն մասին, որ այն օրվանից, երբ սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով դադարում է Կողմերի միջև գործող վերջին Հին գործարքը և սույն հոդվածի 2-րդ կետում նշված հակադարձ ռեպո գործարքը,

Բանկը միակողմանիորեն հրաժարվում է սույն կետում նշված գլխավոր համաձայնագրերից և Բանկի համար դրանց գործողությունը դադարում է:

6. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է երկու հավասարազոր բնօրինակից, յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկ բնօրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Կենտրոնական բանկ	Բանկ
Հասցե՝ Հեռ.՝ Ֆաքս՝	Հասցե՝ Հեռ.՝ Ֆաքս՝
Նախագահ՝	
..... Արթուր Զավադյան	

	Պարտավորության խախտող կողմը	Պարտավորության խախտման դեպքը	Տուժանքի հաշվարկման բազան	Տուժանքի տոկոսադրույք (%)	Տուժանքի հաշվարկման օրերի քանակը (օր)
1	Բանկ	Երբ Բանկը Ռեպո գործարքի կատարման օրը սահմանված ժամին ամբողջությամբ կամ մասնակի չի կատարում կնքված Ռեպո գործարքը	Չկատարված (մասնակի չկատարված) Ռեպո գործարքի մնացորդի նկատմամբ	0.2	1
2	Բանկ	Երբ Բանկը Հակադարձ ռեպո գործարքի կատարման օրը մինչև սահմանված ժամն ամբողջությամբ կամ մասնակի չի կատարում կնքված Հակադարձ ռեպո գործարքը	Չկատարված (մասնակի չկատարված) Հակադարձ ռեպո գործարքի մնացորդի նկատմամբ	0.2	1
3	Կենտրոնական բանկ	Երբ Կենտրոնական բանկը Հակադարձ ռեպո գործարքի կատարման օրը մինչև սահմանված ժամն ամբողջությամբ կամ մասնակի չի կատարում կնքված Հակադարձ ռեպո գործարքը	Չկատարված (մասնակի չկատարված) Հակադարձ ռեպո գործարքի մնացորդի նկատմամբ	0.2	1
4	Բանկ	Երբ առկա է ակցեպտավորված Միջօրյա ռեպո գործարքի կատարման հայտ, սակայն Բանկը չի փոխանցել Ընդունելի արժեթղթեր		0	
5	Կենտրոնական բանկ	Երբ Կենտրոնական բանկը Գործարքի կատարման օրը մինչև սահմանված ժամը դրամական միջոցները չի փոխանցում բանկի թղթակցային հաշվին՝ կնքված Գործարքների մասով	Կնքված և Ընդունելի արժեթղթերով ապահովված Գործարքների դիմաց չվճարված դրամական մնացորդի նկատմամբ	0.2	1
6	Բանկ	Երբ բանկը Գործարքի մարման օրը մինչև սահմանված ժամն ամբողջությամբ կամ մասնակի չի մարում Գործարքը	Գործարքի՝ չմարված գումարի նկատմամբ	1	Յուրաքանչյուր բանկային օրվա համար
7	Բանկ	Երբ բանկը Հակադարձ ռեպո գործարքի մարման օրը մինչև սահմանված ժամն ամբողջությամբ չի մարում Հակադարձ ռեպո գործարքը	Հակադարձ ռեպո գործարքի՝ ՀՀ դրամով արտահայտված արժողության նկատմամբ	1	1
8	Բանկ	Երբ բանկը մինչև սահմանված ժամը ունի Ռեպո զամբյուղն Ընդունելի արժեթղթերով և(կամ) ՀՀ դրամով չհամալրված պարտավորություն	Չհամալրված գումարի մասով	1	Յուրաքանչյուր բանկային օրվա համար
9	Կենտրոնական բանկ	Երբ Կենտրոնական բանկը Գործարքի մարման օրը մինչև սահմանված ժամն ամբողջությամբ կամ մասնակի չի մարում Գործարքը	Գործարքի՝ Չմարված մասի՝ ՀՀ դրամով արտահայտված արժողության նկատմամբ	1	Յուրաքանչյուր բանկային օրվա համար

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
ԿՆՔՄԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան “....” 20..թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ Կենտրոնական բանկ), ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ Արթուր Զավադյանի, մի կողմից, և (այսուհետև՝ Բանկ), ի դեմս, մյուս կողմից, (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ նաև Համաձայնագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն համաձայնագրի իմաստով՝
 - 1.1.1. Ռեպո գործարք (այսուհետև՝ նաև Գործարք)՝ այն գործարքը, որով Բանկը Գործարքի կատարման օրը Կենտրոնական բանկին է վաճառում սույն համաձայնագրով նախատեսված Արժեթղթերը՝ Գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում Արժեթղթերը՝ դրանք Գործարքի մարման օրը վերավաճառելու պարտավորությամբ.
 - 1.1.2. Արժեթուղթ՝ Կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված պետական (գանձապետական) պարտատոմսեր.
 - 1.1.3. Ռեպո գործարքի հայտ կամ Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկին ներկայացված Ռեպո գործարք կնքելու առաջարկ (Հավելված 1).
 - 1.1.4. Հայտի հաստատում (մասնակի հաստատում)՝ Հայտը ստացողի ծանուցումը Հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Հայտը ընդունելու (մասնակի ընդունելու) վերաբերյալ (Հավելված 2): Ընդ որում, Բանկի կողմից առաքված ցանկացած Հայտ բովանդակում է նաև Հայտում նշված պայմանների որոշ մասով (մասնակի բավարարմամբ) Գործարքի կնքման օֆերտա և Կենտրոնական բանկի

- կողմից նման Հայտի որոշ մասով (մասնակի) բավարարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի իմաստով լրիվ և անվերապահ ակցեպտ է)։
- 1.1.5. Հայտի մերժում՝ Հայտը ստացողի ծանուցումը Հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Հայտը մերժելու վերաբերյալ (Հավելված 3)։
 - 1.1.6. Գործարքի ծավալ՝ Արժեթղթի անվանական արժեքը։
 - 1.1.7. Գործարքի գին՝ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող եկամտաբերության կորով հաշվարկված Արժեթղթի գինը։
 - 1.1.8. Գործարքի կնքման օր՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում է (մասնակի հաստատում) Բանկի կողմից ներկայացված Հայտը։
 - 1.1.9. Գործարքի կատարման օր՝ այն Բանկային օրն է, երբ Բանկի կողմից Կենտրոնական բանկի համապատասխան դեպո հաշվին պետք է մուտքագրվեն Գործարքի առարկա հանդիսացող Արժեթղթերը, իսկ Կենտրոնական բանկի կողմից Բանկի համապատասխան դրամային հաշվին՝ ՀՀ դրամը: Գործարքի կատարման օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Գործարքի կատարման օր է համարվում դրան հաջորդող Բանկային օրը։
 - 1.1.10. Գործարքի մարման օր՝ այն Բանկային օրն է, երբ Կենտրոնական բանկի կողմից պետք է Բանկից ձեռք բերված Արժեթղթերը մուտքագրվեն Բանկի համապատասխան դեպո հաշվին, իսկ Բանկի կողմից պետք է Կենտրոնական բանկի համապատասխան դրամային հաշվին մուտքագրվի ՀՀ դրամը: Գործարքի մարման օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Գործարքի մարման օր է համարվում դրան հաջորդող Բանկային օրը։
 - 1.1.11. Բանկային օր՝ օրացուցային շաբաթվա այն օրը, երբ Կենտրոնական բանկն իրականացնում է իր հաճախորդների բանկային սպասարկումը։
 - 1.1.12. Գործառնական օր՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի հաճախորդների սպասարկում։
 - 1.1.13. Պահառու՝ Արժեթղթերի հաշվեգրումն իրականացնող իրավասու մարմին: Արժեթղթերի Պահառուի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ ապահովելով տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկումը։
 - 1.1.14. Դեպո հաշիվ՝ Պահառուի կողմից վարվող Արժեթղթերի հաշվառման՝ Կողմերի սեփական դեպո հաշիվ։
 - 1.1.15. **Կանոններ**՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 22 Հունվարի 2013թ. թիվ 20 Ա որոշմամբ հաստատված “Ռեպո/հակադարձ ռեպո” համակարգի կանոններ։

- 1.1.16. **Միջօրյա ռեպո գործարք, Ռեպո զամբյուղ և Համակարգ** հասկացություններն ունեն Կանոններով սահմանված նշանակությունը.
- 1.1.17. **Գլխավոր համաձայնագիր՝** Կողմերի միջևթ. կնքված Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիր.
- 1.2. Սույն համաձայնագրով նախատեսված Գործարքի առարկա կարող են հանդիսանալ բացառապես սույն համաձայնագրով նախատեսված այն Արժեթղթերը, որոնք Գործարքի կատարման օրվանից սկսած մինչև Գործարքի մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատվածում չեն մարվում (մասնակի մարվում): Արժեկտրոնի վճարման դեպքում արժեկտրոնի գումարը հաշվառվում է Կենտրոնական բանկի (տվյալ պահին Արժեթղթի սեփականատիրոջ) հաշվեկշռում մինչև Գործարքի մարման օրը, իսկ Գործարքի մարման օրը վերադարձվում է Բանկին: Գործարքի մարման օրը պետք է վերավաճառվեն միևնույն Արժեթղթերը:

Հոդված 2. Կողմերի միջև Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման կարգը

- 2.1. Կողմերն համաձայնվում են, որ իրենց միջև սույն համաձայնագրով սահմանված կարգով Ռեպո գործարքներ կարող են կնքել բացառապես այն դեպքերում, երբ վթարի կամ տեխնիկական որևէ այլ պատճառի հետևանքով հնարավոր չէ Ռեպո գործարքներ կնքել Կողմերի միջև Թ. կնքված թիվ Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագրով սահմանված կարգով:
- 2.2. Կողմերի միջև Գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի շարժն ապահովվում է Պահառուի կողմից վարվող Կողմերի դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Կողմերի համապատասխան դրամային հաշիվներով:
- 2.3. Գործարքների կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
- 2.3.1. Գործարք կնքելու նպատակով Բանկի կողմից Կենտրոնական բանկին ներկայացվում է Հայտ:
- 2.3.2. Կենտրոնական բանկն իրավունք ունի մերժել (հայտի մերժում) կամ բավարարել (հայտի հաստատում) ներկայացված հայտը:
- 2.3.3. Գործարք կնքելու հայտը, Հայտը հաստատելու, Հայտը մերժելու ծանուցումները (այսուհետև՝ Փաստաթղթերը) կարող են ներկայացվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Թղթային եղանակի կիրառման դեպքում համապատասխան փաստաթուղթը, սահմանված վերջնաժամկետից 15 (տասնհինգ) րոպե առաջ, ներկայացվում է ստացող Կողմին երկու օրինակից, որից մեկը մնում է փաստաթուղթը ստացող Կողմի մոտ, իսկ մյուսը վերադարձվում է փաստաթուղթը ներկայացնող Կողմին՝ ստացման ժամանակի վերաբերյալ նշումով՝ վավերացված ստացողի ստորագրությամբ:

Կողմերի միջև էլեկտրոնային եղանակով կնքվող Գործարքները կնքվում են «Սի Բի Էյ Նեթ» միջբանկային համակարգչային ցանցի Իրավասու էլեկտրոնային հասցեների միջոցով:

2.3.4. Եթե Գործարք կնքելու հայտ առաքած Բանկը մինչև Հայտում նշված ժամկետը, իսկ ժամկետի բացակայության դեպքում մինչև Հայտի առաքման օրվա ժամը 18:00-ն Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված: Նշված ժամկետներում պատասխան չստանալու դեպքում Հայտը համարվում է մերժված:

2.4. Սույն համաձայնագրի 2.33 կետի համաձայն կնքված Գործարքների հաշվարկները կատարվում են հետևյալ ընթացակարգերի համաձայն.

2.4.1. Կենտրոնական բանկը Գործարքի կատարման օրը անակցեպտ կերպով իրականացնում է Արժեթղթերի փոխանցումը Բանկի դեպո հաշվից Կենտրոնական բանկի դեպո հաշվի վրա և դրամական միջոցների փոխանցումը Կենտրոնական բանկի համապատասխան դրամային հաշվից Բանկի համապատասխան դրամային հաշվի վրա՝ միայն սույն համաձայնագրի 2.3 կետում նշված ընթացակարգով Հայտի հաստատման դեպքում:

2.4.2. Կենտրոնական բանկի դեպո հաշվի վրա Արժեթղթերը մուտքագրելու պահից Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն իրավասու է ազատ տնօրինել, տիրապետել և օգտագործել ձեռք բերված Արժեթղթերը:

2.4.3. Գործարքի մարման օրը տվյալ Գործարքը Կանոններով սահմանված կարգով վերակնքվում է կատարված Միջօրյա ռեպո գործարքի և համապատասխան Արժեթղթերը ներառվում են Ռեպո զամբյուղում, տվյալ Գործարքը համարվում է դադարած, իսկ դրա հետ կապված Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են միայն Կանոններով և Գլխավոր համաձայնագրով :

2.4.4. Եթե տվյալ Գործարքի մարման օրը Համակարգը վթարների կամ այլ պատճառներով չի կարող պատշաճ շահագործվել, ապա սույն համաձայնագրի 2.4.3. կետով սահմանված դրույթները չեն կիրառվում Կենտրոնական բանկը իրականացնում է Արժեթղթերի փոխանցումը Կենտրոնական բանկի դեպո հաշվից Բանկի դեպո հաշվի վրա և

անակցեպտ կարգով՝ դրամական միջոցների փոխանցումը Բանկի համապատասխան դրամային հաշվից Կենտրոնական բանկի համապատասխան դրամային հաշվի վրա, որից հետո տվյալ Գործարքը համարվում է մարված:

- 2.5. Գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են Գործարքի կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից մինչև Գործարքի մարման օրը ներառյալ, ընդ որում՝ տոկոսները վճարվում են Գործարքի մարման օրը:

Հոդված 3. Կողմերի պատասխանատվությունը

- 3.1. Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան Արժեթղթերը Բանկի դեպո հաշվում առկա չլինելու դեպքում Բանկը Կենտրոնական բանկին վճարում է տուժանք՝ Հայտում նշված Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

- 3.2. Գործարքի կատարման օրը Գործարքին համապատասխան դրամական միջոցները Բանկի համապատասխան դրամային հաշվին չփոխանցելու դեպքում Կենտրոնական բանկը Բանկին վճարում է տուժանք՝ Հայտում նշված Գործարքի գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

- 3.3. Գործարքի մարման օրը Բանկի համապատասխան դրամային հաշվում Գործարքին համապատասխան դրամական միջոցները առկա չլինելու դեպքում Բանկը Կենտրոնական բանկին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հայտում նշված Գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը երկու Բանկային օր: Եթե մինչև այդ ժամանակահատվածի ավարտը Բանկի համապատասխան դրամային հաշվում Գործարքին համապատասխան դրամական միջոցները առկա չեն լինում, ապա տվյալ Գործարքը համարվում է լուծված, Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ Գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները, տվյալ Գործարքի առարկա հանդիսացող դրամական միջոցները և Արժեթղթերը չեն վերադարձվում և մնում են որպես այն Կողմի սեփականություն, ում մոտ դրանք գտնվում են տվյալ Գործարքի լուծման պահին::

- 3.4. Գործարքի մարման օրը Կենտրոնական բանկի կողմից Գործարքին համապատասխան Արժեթղթերը Բանկի դեպո հաշվին չփոխանցելու

դեպքում Կենտրոնական բանկը Բանկին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Հայտում նշված Գործարքի գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

Սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը երկու Բանկային օր: Եթե մինչև այդ ժամանակահատվածի ավարտը Կենտրոնական բանկի կողմից համապատասխան Արժեթղթերի փոխանցում տեղի չի ունենում, ապա տվյալ Գործարքը համարվում է լուծված, Գործարքի Կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները, տվյալ Գործարքի առարկա հանդիսացող դրամական միջոցները և Արժեթղթերը չեն վերադարձվում և մնում են որպես այն Կողմի սեփականություն, ում մոտ դրանք գտնվում են տվյալ Գործարքի լուծման պահին::

3.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում իր կողմից վարվող Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն հոդվածով նախատեսված տույժերի գումարները:

3.6. Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի ազդեցության:

Սույն կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն պայմանագրի դրույթները խախտող կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 4. Վեճերի լուծման կարգը

4.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսունօրյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:

4.2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում դրանք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

Հոդված 5. Համաձայնագրի գործողության ժամկետը

- 5.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
- 5.2. Բանկին անվճարունակ, նրա բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից տվյալ Բանկը զրկվում է սույն համաձայնագրով նախատեսված Գործարքները կնքելու իրավունքից:
- 5.3. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 5.2 կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
- 5.4. Ցանկացած Կողմ կարող է սույն համաձայնագրից հրաժարվել՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր կերպով ծանուցելով սույն համաձայնագրի Կողմին:
- 5.5. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է Գործարքի կնքումից առնվազն երկու Բանկային օր առաջ գրավոր ձևով սույն համաձայնագրի մյուս Կողմին տեղեկացնել իր հասցեի, վճարային ռեկվիզիտների, հեռախոսի, ֆաքսի, իրավասու էլեկտրոնային հասցեների, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում տեղեկացումը ստանալուց հետո երկրորդ Բանկային օրը:

Հոդված 6. Այլ դրույթներ

- 6.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու պահից:
- 6.2. Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված և համատեղ ստորագրված և կնքված են Կողմերի կողմից:
- 6.3. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 (երկու) հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր Կողմից տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

Հողված 7. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ	Բանկի անվանում
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ.Սարգսյանի փ., 6	Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, _____ փ.,
Հեռախոս՝	Հեռախոս՝
Ֆաքս՝	Ֆաքս՝
	Թղթակցային հաշիվ Կենտրոնական բանկում՝
«Սի Բի Էյ Նեթ» միջբանկային ցանցի Իրավասու էլեկտրոնային հասցե՝ 1.	«Սի Բի Էյ Նեթ» միջբանկային ցանցի Իրավասու էլեկտրոնային հասցե՝ 1. 2. 3.
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝ _____
«__» «_____» 2011 թ.	«__» «_____» 2011 թ.

Հավելված 1.

ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ	
ՀԱՅՏ N	

Համաձայնագրի N Բանկի կոդ Բանկի անվանում Գործարքի կատարման օր Գործարքի մարման օր Հայտն ուժի մեջ է մինչև	
---	--

Առաջարկություններ				
N	Արժեթղթի գրանցման համարը	Գործարքի ծավալ	Գործարքի գին	Տոկոսա դրույք
1				
2				
3				
4				
..				
...				
27				
28				
29				
30				

	Բանկի գործադիր մարմնի ղեկավար՝

Կ.Տ.

Հավելված 2.

ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)	
ՀԱՅՏ N	

Համաձայնագրի N Բանկի կոդ Բանկի անվանում Գործարքի կատարման օր Գործարքի մարման օր	
---	--

Բավարարված առաջարկություններ				
N	Արժեթղթի գրանցման համարը	Գործարքի ծավալ	Գործարքի գին	Տոկոսա դրույք
1				
2				
3				
4				
..				
...				
27				
28				
29				
30				

Հավելված 3.

ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ	
ՀԱՅՏ N	
Ժամ	

Համաձայնագրի N	
Բանկի կոդ	
Բանկի անվանում	
Գործարքի կատարման օր	
Գործարքի մարման օր	